Հավելված N 3
Կապան համայնքի ղեկավարի
2024 թվականի մայիսի 10-ի թիվ 792-Ա որոշման

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան համայնքը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ՝ հետևյալ նոր թափուր միկրոավտոբուսային երթուղու համար՝

NN ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ				
	անվանումը և համարը	սկզբնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	վերջնակետը (ավտոկայան, ավտոկայարան, երթակարգա-վարական կետ)	տեսակը (ավտոբուսային/ միկրոավ-տոբուսային)	սպասարկման համար պահանջվող ավտոբուսների թիվը (ներառյալ պահուստային ավտոբուսների թիվը)
1	Թիվ 4	Մելիք-Ստեփանյան փողոցի թիվ 3 շենքի հարակից կանգառ	Բաղաբուրջ թաղ.կենտրոնական կանգառ	միկրոավտոբուսային	2

ՑԱՆԿ
ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1994-Ա որոշման N2 ձևի:

2.* Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.*Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4.* Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր,գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական, իսկ ներհամայնքային փոխադրումների դեպքում երթակարգավարական ծառայություններ մատուցող կազմակերպության հետ կնքված ծառայություններ մատուցելու նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

**Չի ներկայացվում հայտ-պարտավորագիր ներկայացնելու դեպքում:*

Մրցույթի անցկացման օրը՝ 2024 թվականի հուլիսի 2-ին ժամը՝ 11:00-ին, ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Փաթեթների բացման օրը՝ 2024 թվականի հունիսի 26-ը, ժամը 11:00-ին՝ ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 2/2 սենյակ:

Հայտերն ընդունվում են ՀՀ Սյունիքի մարզ ք.Կապան, Չարենցի 1, Մշակույթի կենտրոն, 2-րդ հարկ, 5/17 սենյակում, ամեն օր՝ ժամը 9 :00 – 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն է՝ 2024 թվականի հունիսի 25-ը ժամը 18:00-ն:

Հվացուցակին ծանոթանալու համար անցնել հետևյալ հղումներով՝

https://kapan.am/Pages/Misc/Announces/view.aspx?recID=963

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ +374 060 720072 և 060 720074 հեռախոսահամարներով:

Մրցութային հանձնաժողովի նախագահ Գոռ Թադևոսյան